«ՀԱՅԱՑՔ»

ՀՀ ԳԱԱ-ն 60 տարեկան է

Գիտնականներն արժանի են լավ վերաբերմունքի և պատկառանքից բխող հարգանքի

Հոկտեմբերի 10-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում հրավիրված նիստով սկսվեցին ԳԱԱ-ի հիմնադրման 60-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումները, որոնք շարունակվեցին նաև հոկտեմբերի 11-ին: Հանդիսավոր նիստին ներկա էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը, այլ պաշտոնատար անձինք:

Բացման արարողությունն սկսվեց Ն.Ս.Օ.Տ.Տ ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի տերունական աղոթքով: «**Երկրորդ աշխարհամարտի ծանր ժամանակներում ծնունդ առած ակադեմիան վկայում է հայոց պատմության մեջ կրկնվող այն օրինաչափությունը, որ պատերազմների ու ավերների մեջ անգամ մեր ժողովուրդը շարունակ ստեղծագործել է, երկնել Ոսկեդար և հուսացել այգաբացը խաղաղ առավոտի**»-շեշտեց Վեհափառ Հայրապետը: Նա նշեց նաև, որ ՀՀ ԳԱԱ-ի հիմնադիրները՝ երկու տասնյակ երախտավոր հայորդիներ, Հովսեփ Օրբելու՝ ԳԱԱ-ի առաջին նախագահի գլխավորությամբ մատնանշել են մի ուղի, որին առայսօր հավատարիմ է մնացել մեր գիտությունը: Ըստ նրա, ներկա ժամանակներում, երբ գիտության մեջ նվաճումները աննախադեպ ընթացք են ստացել, անչափ կարևոր է գիտնականի բարոյական պատասխանատվությունը, որպեսզի գիտությունը ծառայի մարդուն և չշեղվի իր նպատակից: Վեհափառ Հայրապետը մաղթեց ակադեմիային՝ մնալու բարձունքում և հավատարիմ լինելու ավանդներին, շարունակելու գիտության ձեռքբերումները ծառայեցնել անկախ հայրենիքին:

Ավելացնենք, որ Հայ եկեղեցու հովվապետը ՀՀ ԳԱԱ-ին նվիրեց արծաթե ափսեի վրա քանդակված Էջմիածնի Մայր տաճարի մանրակերտը:

«Ակադեմիայի հիմնումը կարևոր իրադարձություն էր մեր պատմության համար: Մեր ժողովրդի և երկրի կյանքում այն բացառիկ նշանակություն ունեցավ: 1943 թ. պատերազմի ծանր օրերին ակադեմիական կենտրոն ստեղծելը սխրանք էր, ինչը նաև հայ գիտնականների նվաճումների և գիտական մեծ ներուժի ճանաչման վկայությունն է,- իր խոսքում ընդգծեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը:- **Ակադեմիայի հիմնադրմամբ նոր դարաշրջան բացվեց Հայաստանի գիտության պատմության մեջ. այն արձանագրեց աննախադեպ վերելք, դարձավ Խորհրդային Միության հզոր գիտական կենտրոններից մեկը»**: Շեշտելով, որ մինչև Հայաստանի անկախացումը ակադեմիայի կառուցվածքն ու հետազոտությունների ուղղությունները միտված են եղել դեպի խորհրդային պետության խնդիրները, ՀՀ նախագահը փաստեց, որ անկախության հասնելուց հետո ստեղծված նոր իրավիճակում մեր առջև նոր խնդիրներ են ծառացել: Երկիրն ընթանում է բարեփոխումների ճանապարհով, ինչի հետևանքով բարեփոխումների կարիք ունի նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան: «**Իսկ տեմպերն ու ուղիները դուք ինքներդ պետք է որոշեք՝ հաշվի առնելով իրողությունները**»,- ասաց Ռ. Քոչարյանը:

Հանրապետության նախագահը նշեց նաև, որ ինքը լավատեսությամբ է նայում Հայաստանի գիտության զարգացման հեռանկարներին, քանի որ ակադեմիայում հետևողականորեն հաղթահարում են այն դժվարությունները, որոնցից խուսափելն անհնար է: «Գիտությունն այն կարևոր գործոնն է, որի շնորհիվ Հայաստանը կարող է դառնալ արդիական երկիր, ունենալ գիտատար տնտեսություն: Հայաստանը պետք է լինի մտավոր ծառայությունների տարածաշրջանային կենտրոն: Այս բանաձևը ենթադրում է հատուկ վերաբերմունք և ուշադրություն գիտության նկատմամբ, հակառակ դեպքում նպատակն անհասանելի կլինի», - շեշտեց ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանը: «**Միասին աշխատելով՝ կառուցենք մեր երկիրը**»,- այսպիսի կոչով պրն Քոչարյանն ավարտեց իր ելույթը: Նա գիտության բնագավառում ձեռքբերած նշանակալից նվաճումների համար և ՀՀ ԳԱԱ հիմնադրման 60-ամյակի առիթով շուրջ երկու տասնյակ գիտնականների շնորհեց ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչում և Մխիթար Հերացու, Անանիա Շիրակացու, Մովսես Խորենացու մեդալներ:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը նշեց, որ Հայաստանի հազարամյակների պատմության մեջ 60 տարին մի ակնթարթ է միայն, բայց այն իր մեջ խտացրել է ժողովրդի հանճարի դրսևորման, գիտության բնագավառում հերոսական մաքառումների և որոնող մտքի ոգին: «**Ստեղծվելով պատերազմի ծանր օրերին՝ ԳԱԱ-ն կարճ ժամանակամիջոցում դարձավ ոչ միայն գիտական մտքի զարգացման բարձրագույն կառույց, այլև իր շուրջը համախմբեց ողջ մտավորականությանը՝ ձևավորվելով որպես երկրի և հայ ժողովրդի մտավոր տաճարի խորհրդանիշ**», -ասաց նա: ԳԱԱ նախագահի գնահատմամբ, անցած տարիների ընթացքում ակադեմիան հիմնարար գիտության բնագավառում իր հետազոտություններով, գիտական մշակումներով լուրջ ավանդ է ներդրել ոչ միայն Հայաստանի, այլև համաշխարհային գիտության զարգացման գործում՝ նպաստելով համայն քաղաքակրթության առաջընթացին:

ՀՀ ԳԱԱ-ն իր 60-ամյա պատմության ընթացքում ունեցել է 189 ակադեմիկոս, 39 արտասահմանյան անդամ, 16 պատվավոր անդամ: Ակադեմիայի իսկական անդամներ են եղել Հովսեփ եւ Լևոն Օրբելիները, Վիկտոր Համբարձումյանը, Աբրահամ եւ Արտեմ Ալիխանյանները, Ավետիք Իսահակյանը, Արամ Խաչատրյանը, Մարտիրոս Սարյանը, Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Դերենիկ Դեմիրճյանը և այլ մեծեր: Ակադեմիան կնքել է համագործակցության մասին պայմանագրեր եւ համաձայնագրեր ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Չինաստանի, Հնդկաստանի և ԱՊՀ անդամ մի շարք երկրների հետ: Որպես ՀՀ կառավարության գիտական խորհրդատու՝ ակադեմիան գործակցում է տարբեր նախարարությունների հետ:

Հոբելյանական միջոցառումներին մասնակցում էին Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Վրաստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի գիտությունների ակադեմիաների և ԼՂՀ, Ռուսաստանի հայերի միության, միջազգային կազմակերպությունների պատվիրակությունները:

ՌԴ ակադեմիայի նախագահ Յուրի Օսիպովը, շնորհավորելով հայ գործընկերներին, նկատեց, որ տոնը միայն հայկական չէ, քանի որ ՀՀ ԳԱԱ-ում աճել են բազմաթիվ գիտնականներ, ովքեր այսօր աշխատում են տարբեր երկրների գիտական կենտրոններում:

«Հոբելյանական այս տարեթիվը հարաբերական է, քանի որ հայ գիտությունն անհամեմատ «տարեց» է, և նրա արմատները տանում են դեպի խոր հնություն, իսկ ռուս-հայկական բարեկամական կապերն ամրապնդվել են մեր գիտնականների համագործակցությամբ՝ հատկապես 19-20-րդ դարերում», -ասաց նա: Ռուսաստանցի գիտնականը ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի անդամներից ընդգծեց Աբրահամ Ալիխանյանի, Վիկտոր Համբարձումյանի, Արտեմ Միկոյանի, Հովսեփ և Լևոն Օրբելիների անունները: Յու. Օսիպովը ակադեմիկոսներ Ֆ. Սարգսյանին եւ Սերգեյ Համբարձումյանին հանձնեց ՌԴ ԳԱ արտասահմանյան անդամի կոչման վկայագրեր:

Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 11-ին, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ընդունեց ակադեմիայի 60-ամյակի առիթով Հայաստան ժամանած ակադեմիկոսների ու գիտնականների պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են գիտության այսօրվա խնդիրներին, համագործակցության հեռանկարներին ու գիտական սերնդափոխությանը վերաբերող հարցեր: Այս մասին ԶԼՄ-ներին տեղեկացրել են ՀՀ նախագահի մամլո գրասենյակից:

Անշուշտ, գիտության զարգացման առաջնահերթությունն այլընտրանք չունի: Բայց դրան հասնելու համար մենք պետք է միջոցներ որոնենք՝ կանխելու հատկապես հայ գիտնականների արտահոսքը, որոնցից շատերն այսօր այլ երկրներում են աշխատում: Երբ լսում ենք, որ որևէ ուրիշ պետության առաջատար գիտահետազոտական կենտրոնում կամ գիտական այլ նշանավոր հիմնարկում ազգությամբ հայ է աշխատում, հպարտանում ենք, մինչդեռ ցավն ավելի մեծ պիտի լինի, որովհետև նրանց գործունեության պտուղներն ուրիշներն են վայելում: Հուսանք, որ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 60-ամյակը կնշանավորվի «Հայ գիտնականները պետք է աշխատեն Հայաստանում» կամ նման մեկ այլ կարգախոսի հռչակմամբ, և գործնական քայլեր կկիրառվեն՝ նրանց վերադարձն ապահովելու համար: Գիտական մտքի ներուժով հպարտանալը միայն շատ քիչ է և չի դարմանի գիտնականների «վերքերը», քանզի նրանք իրենց ինտելեկտուալ ներուժով արժանի են լավ վերաբերմունքի և պատկառանքից բխող հարգանքի: